

## Հաշվետվություն

2023 թվականի սեպտեմբերի 10-ից 13-ը Ռուսաստանի Դաշնություն  
(Վլադիվոստոկ) կատարած գործուղման արդյունքների մասին

### 1. Անունը, ազգանունը.

Մհեր Խաչատրյան

### 2. Զբաղեցրած պաշտոնը.

Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար

### 3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, սեպտեմբերի 10-ից 13-ը

### 4. Հրավիրող կողմը.

ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայություն  
(Ռոստեեստր)

### 5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Արևելյան տնտեսական VIII համաժողովին

### 6. Քննարկված թեմաները.

- ենթակառուցվածքներ և էներգետիկ ռեսուրսներ,
- երկրատարածական տվյալների ազգային ենթակառուցվածք. Հեռավոր Արևելքի դաշնային շրջանի զարգացման համար հեռանկարային լուծումներ,
- հարմարավետ ու անվտանգ միջավայրի ստեղծում մեծ, միջին և փոքր բիզնեսի համար,
- միջազգային համագործակցության ծավալումը փոփոխվող աշխարհում,
- թվային միջավայրում միջազգային հանրային երկխոսության ծավալումը,
- տեխնոլոգիական առաջընթացը որպես ինքնիշխանության երաշխիք:

### 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովում շոշափված հիմնական թեմաներից էին նոր իրողությունների պայմաններում միջազգային համագործակցության զարգացումը, տեխնոլոգիաների արդիականացման հարցերը, մատակարարման ուղիների շղթաների փոխակերպումը: Անցկացվել են պանելային և կլոր սեղան ձևաչափով քննարկումներ՝ նվիրված համաշխարհային և տարածաշրջանային օրակարգի ամենահրատապ խնդիրներին:

ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության ղեկավար կազմի հետ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն

ներկայացնող մի շարք հարցեր, երկկողմ և բազմակողմ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները, դրանց գործնական արդյունքները: Մասնավորապես անդրադարձ է կատարվել մինչև 2026 թվականի գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային գրանցման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների միջև համագործակցության ծրագրին: Ներկայացվել են առաջարկություններ և հիմնավորումներ նախագծի խմբագրման վերաբերյալ:

Բելառուսի Հանրապետությունում կայանալիք ԱՊՀ անդամ երկրների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XLV նստաշրջանին ընդառաջ՝ անդրադարձ է կատարվել նաև օրակարգային հարցերի վերաբերյալ կողմերի դիրքորոշումների հստակեցմանը:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաժողովի ընթացքում կայացած հանդիպումների, քննարկումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել խորացնելու երկկողմ և միջազգային կազմակերպությունների շրջանակներում ծավալվող համագործակցությունները, խթանելու համապատասխան ոլորտներում լավագույն փորձի փոխանակումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Ընդգծվել է ոլորտի պատասխանատուների, մասնագիտական շրջանակների ներգրավմամբ պարբերական միջոցառումների, այդ թվում՝ առցանց հանդիպումների կազմակերպման անհրաժեշտությունը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

Մհեր Խաչատրյան



18.09.2023 թ.